

ԽՈՇՈՐ ԵՂՋԵՐԱՎՈՐ ԿԵՆՂԱՆՆԵՐԻ ՃԻՃՎԱԹԱՓՄԱՆ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՃԻՃՈՒՆԵՐԻ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԳԱՆԻԶՄԻ ՎՐԱ

- Տրոֆիկ (սնվում են կենդանու հաշվին, որի պարճառով վերջինս նիհարում է, հյուծվում, հետ մնում աճից, ընկնում է օրգանիզմի դիմադրողակնությունը)
- Թունավոր (տիրոջ օրգանիզմում ապրելով, իրենց կենսագործունեության արդյունքում արտազարած նյութերով թունավորում են կենդանուն)
- Մեխանիկական (վնասում են կենդանու փարբեր օրգանների լորձաթաղանթները, կարող են առաջացնել նաև օրգանի պարոլվածք)
- Ներմուծող (կենդանու օրգանիզմ անցնելով հնարավորություն են տալիս նաև այլ հիվանդությունների հարուցիչների ներթափանցմանը)
- Ալերգիկ (կենդանու մոտ առաջացնում են ալերգիկ երևույթներ)

Ժամանակին և ճիշտ ճիճվաթափման արդյունքում Ձեր կենդանիները գերժ կմնան վերոնշյալներից: Ըիճվաթափման արդյունքում կբարձրանա կենդանու մթերաբաղադրությունը:


Կանխարգելիչ նպատակով կովերին պետք է ճիճվաթափել փարեկան առնվազն 2 անգամ՝ զարնանը (արտադրանքի շրջանին անցնելուց 2-4 շաբաթ առաջ) և աշնանը մսուրային շրջանին անցնելուց առաջ, հորթերին՝ 1-1.5 ամսականից: Վիճվաթափման առկայության դեպքում հորթերին կարելի է ճիճվաթափել հենց 1.5-2 շաբաթականից:

ԿԱՐԵՎՈՐ Է, որ ճիճվաթափումից 10-14 օր անց կրկնել այն, քանի որ առաջին ճիճվաթափման արդյունքում թափվում են միայն հարուցիչների սեռահասուն ձևերը, իսկ նրանց ձվերը մնում են կենդանու օրգանիզմում, որոնցից հենց 10-14 օր հետո դուրս են գալիս նորից սեռահասուն ճիճուներ, որոնք կթափվեն միայն ճիճվաթափումը կրկնելուց:

Ճիճվաթափման համար կարելի է կիրառել ինչպես հաբեր, այնպես էլ ներարկման և խմեցման լուծույթներ:

Թե որ փարբերակով է գերադասելի ճիճվաթափել, կախված է հարուցիչ տեսակից:


Ֆասցելյոզով (քյափանակ) վարակման ցիկլը



ՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Որոշ ճիճվային հիվանդություններ վարանգավոր են նաև մարդու առողջություն համար:



 Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Cooperation Office
South Caucasus

 SDA Strategic Development Agency
Strategies for Development